ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 284-Ա 15 մայիսի 2026 թ.

# ՆՈՅԵՄԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՀԱՄԱՐ 3 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 37.1-րդ, 37.2-րդ, 39-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջներն ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 6-ի N 716 արձանագրությունը (2026 թվականի մայիսի 12-ի Ն/1565-2026), ինչպես նաև Նոյեմզար Վարդանյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Նոյեմզար Վարդանյանին 2026 թվականի մայիսի 18-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համար 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով (18.05.2026-18.05.2031թթ.):

2. Նոյեմզար Վարդանյանի համար սահմանել փորձաշրջան 1 տարի ժամկետով՝ փորձաշրջանի ղեկավար նշանակելով «Վարդենիկի կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կամո Բադալյանին:

3. Փորձաշրջանի ղեկավար Կամո Բադալյանին՝ առաջնորդվել կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով:

15.05.2026

X

ՋԱՆԻԿ ԲԱԶԵՅԱՆ

Подписано: BAZEYAN JANIK 2208850319

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

Ջ. ԲԱԶԵՅԱՆ
ք. Գավառ